ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 31.08.2023թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 32 (երեսուներկու) անդամից՝ 27-ը, (քսանյոթը):

(Գագիկ Նիկողոսյանը և Արթուր Մկրտչյանը էլեկտրոնային նամակի միջոցով օրակարգի և դրա հարցերի վերաբերյալ ուղարկել են իր դիրքորոշումը՝ «կողմ» քվեարկելով):

Նիստին մասնակցում էին՝

№	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆ
1.	Սերոբյան Երվանդ	Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
2.	Ավետիսյան Նազելի	Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ
3.	Նիկողոսյան Գագիկ	ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4.	Մելքոնյան Հովիկ	Արտաքին համագործակցության կապերի կենտրոնի տնօրեն
5.	Մարգարյան Լիլիթ	Գիտական քաղաքականության և նորորարության կենտրոնի տնօրեն
6.	Պետրոսյան Կարինե	Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)
7.	Հովհաննիսյան Օֆելյա	Հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ բ.գ.թ., դոցենտ
8.	Մկրտչյան Արթուր	Ռազմական ամբիոնի պետ
9.	Դավինյան Աշոտ	Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնի պետ-տնօրեն
10.	Խաչատրյան Վալերի	ՇՊՀ արհմիության նախագահ
11.	Մկոյան Արտաշես	Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենատարեց դոկտոր)
12.	Մարտիրոսյան Լևոն	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ

13.	Մկրտչյան Արթուր	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի տնտեսագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ
14.	Ավետիսյան Գայանե	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի աշխարհագրության և սերվիսի ամբիոնի վարիչի ԺՊ, աշխ. գիտ. թեկ, դոցենտ
15.	Ղուկասյան Լուսիկ	Հասարակական գիտությունների ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մանկ. գ.թ., դոցենտ
16.	Աղանյան Գևորգ	Հասարակական գիտությունների ֆակուլտետի սպորտի և արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
17.	Գասպարյան Արշավիր	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի պատմության և իրավագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
18.	Սահակյան Կարինե	Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ
19.	Հովհաննիսյան Անահիտ	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
20.	Մխիթարյան Լիլիթ	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի թարգմանչական գործ մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
21.	Մինասյան Ելենա	Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 4-րդ կուրսի ուսանողուհի
22.	Բեժանյան Մերի	Հասարակական գիտությունների ֆակուլտետի սոցիալական աշխատանք մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի
23.	Հակոբյան Աննա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեղագործական քիմիա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի
24.	Ադամյան Հասմիկ	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
25.	Շարոյան Մարիաննա	Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի
26.	Մխիթարյան Աիդա	Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 4-րդ կուրսի ուսանողուհի
27.	Մարգարյան Հրաչուհի	Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի

ՕՐԱԿԱՐԳ

1. 2023-2027 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի ուսումնական աշխատանքային պլանների հաստատում

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ՝ **Ն. Ավետիսյան**

2. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կանոնադրության հաստատում

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ՝ **Ն. Ավետիսյան**

3. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի կանոնադրության հաստատում

Հաղ.՝ Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի տնօրեն՝ **Լ. Մարգարյան**

4. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Արտաքին համագործակցության կենտրոնի կանոնադրության հաստատում

Հաղ.՝ Արտաքին համագործակցության կենտրոնի տնօրեն՝ **Հ. Մելքոնյան**

5. Ընթացիկ հարցեր

Գիտական խորհրդի նախագահ Ե. Սերոբյանը բացելով գիտական խորհրդի նիստը՝ հայտարարեց քվորումի առկայության մասին, քվեարկության դրեց նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց քվեարկության արդյունքում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. ԼՍԵՑԻՆ՝

2023-2027 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի ուսումնական աշխատանքային պլանների հաստատում

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց 2023-2027 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի ուսումնական աշխատանքային պլանների հետ կապված փոփոխությունները, ստուգման ձևերը: Նա նշեց, որ աշխատանքային պլանները տարբերվում են բազային պլաններից, առաջին հերթին ստուգման ձևերից, քանի որ նախատեսվում է, որ ստուգման ձևերը կարող են լինել

ճկուն, այսինքն մեկ տարի իրականացնելուց հետո կրթական ծրագրի պատասխանատուների կողմից կարող են կատարվել առաջարկություններ: Տիկին Ավետիսյանը նշեց նաև, որ նախկինում գործել են միայն աշխատանքային պլաններ, բաժանված չեն եղել կրթամասերի, այժմ և՛ աշխատանքային պլանները, և՛ ստուգման ձևերը պետք է հաստատվեն գիտական խորհրդի կողմից: Տիկին Ավետիսյանը դիտարկում կատարեց, որ աշխատանքային պլաններում եռակի, քառակի ստուգումից հետո, այնուամենայնիվ էլի մի քանիսում տեխնիկական բնույթի սխալներ են գրանցվել՝ ժամաքանակների հետ կապված, ուստի համապատասխան ամբիոնի վարիչի կողմից գրվել է զեկուցագիր տեխնիկական վրիպակի ուղղման համար: Տիկին Ավետիսյանը նշեց, որ ակնկալում և հորդորում է, որ այսուհետ ամբիոնների կողմից այս գործընթացները շատ լուրջ ու պատշաճ ձևով իրականացվեն:

Պարոն Սերոբյանը հավելեց, որ դրանք տեխնիկական բնույթի վրիպակներ են և կարելի է տեղում ուղղել, ապա քվեարկել պլանների հաստատման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2023-2027 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի ուսումնական աշխատանքային պլանները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կանոնադրության հաստատում

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ համալսրանն այսօր իր կառուցվածքում ունի 3 կենտրոններ, որոնք կրում են ռազմավարական ծրագրի երեք հիմնական նպատակները և դրանց իրականացման համար բուհի իրականացրած հիմնական առաքելությունը իրականացվում է այդ երեք ուղղություններով, ուստի այդ կենտրոններն են կրում գործառութային ծանրությունը իրենց վրա: Տիկին Ավետիսյանը շարունակեց, որ երեք կենտրոններն էլ ունեն նույն կառուցվածքը, դրանց նպատակներն ու խնդիրները բացառապես համապատասխանում են բուհի ռազմավարական նպատակներին, հստակեցվել են հերարխիկ կապերը, ենթակայությունները: Տիկին Ավետիսյանն առանձին կանգ առավ Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կանոնադրության դրույթներին, գործունեությանը, ներկայացրեց կանոնադրության հավելվածները:

Պարոն Սերոբյանը նշեց, որ Գիտական խորհրդի անդամները պետք է ուժը կորցրած ճանաչեն նախկին կանոնադրությունները , այնուհետև հաստատեն նորերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ուժը կորցրած ճանաչել Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի նախկին կանոնադրությունը և հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի կանոնադրությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի կանոնադրության հաստատում

Տիկին Մարգարյանը ներկայացրեց Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի կանոնադրության հիմնական դրույթները, գործառույթները, բաժինները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝Ա. Հովհաննիսյանին հետաքրքրում էր, թե նորարարության հետ կապված շեշտադրված խնդիրների ինչպիսի՞ լուծման ուղիներ են տեսնում:

Տիկին Մարգարյանը պատասխանեց, որ նորարարության հետ կապված խնդիրները ձևակերպված են ռազմավարական ծրագրում, իսկ գործառույթների մեջ որպես այդպիսին հստակ կետ փորձել են առանձնացնել, որը ընթերցվեց տիկին Մարգարյանի կողմից:

Պարոն Սերոբյանը հավելեց, որ նորարարությունը ուղղակի չպետք է հասկանալ միայն գիտական նորույթի տեսանկյունից, այլ եթե նույնիսկ համալսարանում նոր կիրառվող գործընթացներ են ընդգրկվում թե՛ կառավարման համակարգում, թե՛ կրթական և հետազոտության բաղադրիչների մեջ, դրանք նույնպես նորարարություն են:

Տիկին Պետրոսյանին հետաքրքրում էր, թե արդյո՞ք կենտրոնի գործառույթների մեջ չարժի ամրագրել այն, որ համալսարանը մարզի տարբեր գիտահետազոտական հիմնարկների հետ պայմանագրեր ունի և համատեղ աշխատանքում համալսարանում գիտական հետազոտություններ և հոդվածներ, մագիստրական թեզեր են իրականացվում:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ դրանք առկա են Արտաքին համագործակցության կենտրոնի կանոնադրության մեջ: Բացի դրանից կենտրոնների կանոնադրությունների հաստատումից հետո դրանց հետևելու է յուրաքանչյուր կենտրոնի հնգամյա աշխատանքային պլանը և յուրաքանչյուր տարվա աշխատանքային պլանի հաստատումը, որտեղ կներառվեն հարցադրված գործնական քայլերը:

Տիկին Ավետիսյանը հավելեց, որ իրենց կենտրոնի՝ գործատուների հետ գործընկերային և պայմանագրային հարաբերությունների հաստատման կարգում բարձրաձայնված հարցի հետ կապված դրույթ նույնպես ամրագրված է:

Տիկին Մարգարյանը ընթերցեց Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի կանոնադրության 3.2-ի I կետը և ընդգծեց, որ ամբողջական ձևով վերոնշյալ հարցի հետ կապված կետը ընդգծված է, ինքը համաձայն է պարոն Սերոբյանի հետ, որ մանրամասները կընդգրկվեն աշխատանքային պլանում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ուժը կորցրած ճանաչել նախկին Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի կանոնադրությունը և հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի կանոնադրությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝
27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Արտաքին համագործակցության կենտրոնի կանոնադրության հաստատում

Պարոն Մելքոնյանը ներկայացրեց Արտաքին համագործակցության կենտրոնի կանոնադրության գործառույթները, լրամշակված հատվածները, որտեղ նկատի են ունեցել նաև աշխատակիցների աշխատանքային պարտականությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ուժը կորցրած ճանաչել նախկին Արտաքին համագործակցության և հասարակության հետ կապերի կենտրոնի կանոնադրությունը և հաստատել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Արտաքին համագործակցության կենտրոնի կանոնադրությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

27 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ՝
Ընթացիկ հարցեր

Պարոն Սերոբյանը տեղեկացրեց, որ «SMART» ծրագրով համալսարանը համակարգիչներ է ստացել և համակարգչային լսարանների թիվը արագ տեմպով ավելացնում են: Նա նշեց, որ այն, ինչ Ռազմավարական ծրագրում գրված էր ենթակառուցվածքների բարելավման և տեխնիկապես հագեցնելու մասով, կարծես հինգ տարվա համար նախատեսվածը գործնականում մինչև սեպտեմբերի վերջ կատարված կլինի: Պարոն Սերոբյանը տեղեկացրեց նաև, որ գիտական խորհրդի նախկին սենյակում «Project harmoni»-ի օգնությամբ ստեղծում են «Քաղաքացիական կրթության կենտրոն», կահավորելու են տասը նոթ-բուքով և մեկ կառավարող կենտրոնական համակարգչով, կահույքով, գրապահարաններով: Կենտրոնը մինչը 14:30-ը պետք է գտնվի համալսարանի տրամադրության տակ՝ ծառայելով որպես լսարան, իսկ այդ ժամից մինչև 18:00-ը՝ որպես կենտրոնի գործառույթներն իրականացնող: Կենտրոնի աշխատանքները կարգավորելու են թվով 4 ուսանողներ, որոնցից 2-ը համակարգողի կարգավիճակ ունեն, մյուս 2-ը՝ կամավորի: Համակարգողների ուսման վարձերը ամբողջությամբ վճարում է «Project harmoni» կազմակերպությունը: Պարոն Սերոբյանը շարունակեց, որ, «Լեզուների

կենտրոն»-ի հետ կապված անելիքներ ևս ունեն, որի աշխատանքները շուտով կկարգավորվեն և մեկ համակարգչային լսարանով կհամալրվի նաև Հասարակական գիտությունների ֆակուլտետը և դպրոցը: Պարոն Սերոբյանը խոսեց նաև դպրոցի աշակերտների համալրման մասին՝ տեղեկացնելով, որ և՛ ավագ, և՛ հիմնական դպրոցում վիճակը բավականին բարվոք է և դպրոցում դասավանդող ուսուցիչները հիմնականում տարակարգ ունեցող ուսուցիչներ են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՅԻՆ՝ Վ Խաչատրյանին հետաքրքրում էր, թե «Քաղաքացիական կրթության կենտրոն»-ի գործառույթները որո՞նք պետք է լինեն:

Պարոն Սերոբյանը պատասխանեց, որ քաղաքի երիտասարդության համար ռազմավարական ծրագրով իրենք բազմաթիվ խնդիրներ են առաջադրել, որոնք համահունչ են Կենտրոնի ծրագրերին, ապա շարունակեց, որ Կենտրոնում կազմակերպվելու են դասընթացներ, սեմինարներ, հանդիպումներ, քննարկումներ, կինոդիտումներ և այլն: Պարոն Սերոբյանը շարունակեց, որ պայմանագրում թեմաները հստակեցված են, թեմատիկան հաստատվում է ՇՊՀ ռեկտորի կողմից, այդ ծրագրին մասնակցում են հանրապետության հինգ բուհեր, բազմաթիվ քննարկումների ինքը որպես ռեկտոր մասնակցել է և 5 տարի հետո Կենտրոնը ամբողջությամբ մնում է համալսարանին: Այսինքն համալսարանի ներդրումը ծրագրի հետ համագործակցության շրջանակում այն է, որ իրենք շենքային պայմաններ են տրամադրում օրական մի քանի ժամ և ապահովում են Կենտրոնի պահպանությունը:

1.Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր	Ե. ՄԵՐՈԲՅԱՆ
2.Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ	Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ
3.ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
4.Արտաքին համագործակցության կենտրոնի տնօրեն	Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ
5.Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի տնօրեն	Լ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
6.Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)	Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
7.Հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ	Օ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
8.Ռազմական ամբիոնի պետ	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
9. Մինչբուհական կրթության կազմակերպման բաժնի պետ-տնօրեն	Ա. ԴԱՎԻՆՅԱՆ
10.ՇՊՀ արհմիության նախագահ	Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
11.Մ.գ.դ, պրոֆեսոր, (ամենատարեց դոկտոր)	Ա. ՄԿՈՅԱՆ
12.Պատմ. գիտ. դոկտոր, (ամենաերիտասարդ դոկտոր)	Հ. ԽՈՐԻԿՅԱՆ
13.ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր	Ս. ՍԱՐԳՍՅԱՆ
14.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ	Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
15.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի տնտեսագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ	Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
16.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի աշխարհագրության և սերվիսի ամբիոնի վարիչի ԺՊ, աշխ. գիտ. թեկ. դոցենտ	Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

17.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.թ.	Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ
18.Հասարակական գիտությունների ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մանկ. գ.թ., դոցենտ	Լ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
19. Հասարակական գիտությունների ֆակուլտետի սպորտի և արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ	Գ. ԱՂԱՆՅԱՆ
20.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի պատմության և իրավագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ	Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ
21.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի պատմության և իրավագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.	Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
22. Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ.,դոցենտ	Կ. ՍԱՀԱԿՅԱՆ
23.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր	Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
24.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր	Մ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
25.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի թարգմանչական գործ մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի	Լ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
26. Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 3-րդ կուրսի ուսանողուհի	Ե. ՄԻՆԱՍՅԱՆ
27. Հասարակական գիտությունների Ֆակուլտետի սոցիալական աշխատանք մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի	Մ. ԲԵԺԱՆՅԱՆ
28.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեղագործական քիմիա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի	Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
29.Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի	Հ. ԱԴԱՄՅԱՆ

30.Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ռուսաց լեզու և գրականություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի	Մ. ՇԱՐՈՅԱՆ
31.Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստության 3-րդ կուրսի ուսանողուհի	Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ
32. Հասարակական գիտությունների ֆակուլտետի հոգեբանություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի	Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ